ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1952, Общественные науки

Ա. Կծոյան

19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՍԱՆԵՐԸ

Թյուրքական և իրանական լոնակալության տակ դարեր շարունակ տառապող հայ ժողովրդի կյանքում 1828 թվականին կատարվեց պատմական խոշոր նշանակություն ունեցող իրադրություն։ Պատմական Հայաստանի մի ղգալի մասը ազատագրվեց «ֆեոդալական ամենացածր և բարբարոսական աստիճանի վրա» գտնվող (Մարքս) Իրանի լծից և իր ռախար առհավետ կապեց ռուս մեծ ժողովրդի հետ։ Ռուսաստանը կուլտուրայի տեսակետից անհամեմատ բարձր աստիճանի վրա էր կանգնած։ «Արևելքի նկատմամբ,—ինչպես գրել է Էնգելսը,—Ռուսաստանը կատարում է իրոք պրոգրեսիվ դերը»[1]։

Ժամանակի հայ առաջավոր գործիչները անհուն բերկրանքով ողջունեցին ռուսների փրկարար մուտքը Հայաստան։ Հայ մեծ լուսավորիչ-դեմոկրատ գրող Խաչատուր Աբովյանը սիրո և ոգևորության ջերմ խոսքեր էր ուղղում Հայաստանն ազատագրող ռուսական բանակներին։

«Օրհնվի էն սհաթը,—գրել է նա,—որ ոսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած շունչը մեր երկրից հալածեց...»[2]։

Արևելյան Հայաստանի միացումով Ռուսաստանին՝ հայ ժողովուրդը ոչ միայն փրկվեց ֆիզիկական բնաջնջումից, այլև որոշ հնարավորություններ ստացավ զարգացնելու իր կուլտուրան և հաղորդակից լինելու ռուսական առաջավոր կուլտուրայի նվաճումներին։

Թյուրքիայի և Իրանի տիրապետության տակ հարյուրամյակների ընթացքում ժողովրդական առողջապահության գործը փաստորեն գտնվում էր խավարամտության ու տգիտության ճիրաններում։ Հայաստանում չկար ոչ մի առողջապահական հիմնարկ, հիվանդանոց, բուժարան կամ դեղատուն։

Արևելյան Հայաստանի մի ղգալի մասը Ռուսաստանին միանալուց հետո, հենց 1829 թ. Երևանում սկսում է գործել առաջին առողջապահական հաստատությունը՝ ռուսական զինվորական հիվանդանոցը (հոսպիտալը) իր դեղատնով։ Մի քանի տարի անց Հայաստանում սկսում են երևան գալ ռուսական կենտրոնական քաղաքներում՝ Մոսկվայում, Պետերբուրգում, Դորպատում բժշկական բարձրագույն կրթություն ստացած ռուս և հայ բժիշկներ։ Նրանց ջանքերով հիմնվում են առաջին բժշկական առողջապահական օջախները, որոնք պայքարում են տիրող խավարամտության դեմ, ձգտում են առողջապահական-սանիտարական գործը դնել գիտական հիմքերի վրա։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XXI, Москва, 1932, стр. 211.

[2] *Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1939, էջ 71։*

Ահա այս տեսակետից հետաքրքրական դեմք է 1833 թվականին Մոսկվայից Հայաստան եկած բժիշկ Սիմոն Գրիգորի Լոռու-Մելիքյանը։ Նրա կյանքի և գործունեության մասին հետաքրքրական տվյալներ են պահպանվել վերջերս Մատենադարանի կողմից ձեռք բերված նամակներում[1], որ գրել են միմյանց 1819—1848 թթ. ընթացքում հայր և որդի՝ Գրիգոր և Սիմոն Լոռու-Մելիքյանները։

Սիմոն Լոռու-Մելիքյանի ծնողները բնիկ լոռեցիներ են, որոնք հետագայում վերաբնակություն են հաստատել Վրաստանի Սղնախ գյուղում։ Սիմոնի հայրը՝ Գրիգոր Լոռու-Մելիքյանը եղել է քահանա, բայց միաժամանակ զբաղվել է բժշկական պրակտիկայով. հավանական է, որ Սիմոնը իր սկզբնական բժշկական կրթությունը ստացած պետք է լինի իր հորից։ 1819 թվականին մենք Սիմոնին հանդիպում ենք Թելավում, որտեղ նա պատրաստվում էր սովորել բժշկություն։ Այս մասին նրա 1819 թ. նոյեմբերի 6-ին Թելավից գրած նամակում կարդում ենք.

«...Ահա ես ողջ և առողջ, պարա[պ]ետալ ի վայրժեալ իմաստից ընթերցուեծոց և ուսմանց չնաշխարհիկ լեզուաց լատինաց և ռուսաց, որոնց մինն և միւսն երևին ինձ պիտանացու ի յառաջատուութիւն բժշկական արհեստի և ի կատարելագործութիւն նորինն»։

Այս տողերից պարզվում է, որ բժշկագիտության մեջ կատարելագործվելու նպատակով Սիմոնը անհրաժեշտ է համարում տիրապետել լատիներեն և ռուսերեն լեզուներին։ 18-րդ դարի վերջերին արդեն Ռուսաստանում կային բժշկական գիտությունների մի քանի նշանավոր կենտրոններ՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը (1764 թ.), Պետերբուրգի և Մոսկվայի բժշկա-վիրաբուժական ակադեմիաները (1799 թ.), Դորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետը (1803 թ.), Կազանի և Խարկովի բժշկական ֆակուլտետները (1804 թ)։ 18-րդ դարի երկրորդ կեսից և հատկապես 19-րդ դարի սկզբներից ռուսերեն լեզվով իրար ետևից լույս են տեսնում բժշկական ձեռնարկներ, ռուս հեղինակների՝ Ն. Մ. Ամրոտիկի, Զագորսկու, Ե. Օ. Մուխինի, Մ. Ե. Մուդրովի, Ռ. Վ. Բույալսկու և ուրիշների մենագրական աշխատությունները։ Ռուսերեն լեզվով հրատարակվում են բժշկական պարբերականներ—„Петербургские врачебные ведомости“ (1792), „Всеобщий журнал врачебной науки“ (1811), „Военно-медицинский журнал“ (1823) և այլն։

Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչու Սիմոն Լոռու-Մելիքյանը բժշկագիտությունը սովորելու համար անհրաժեշտ է համարել տիրապետել ռուսերեն լեզվին։ Այժմ հարց է ծագում, Թելավում ինչ կերպով կարող էր նա բժշկություն սովորել։

1819 թվականից մինչև 1823 թ. Թելավից իր հորը գրած նամակներից պարզվում է, որ նա աշակերտել է 19-րդ դարի սկզբների հայտնի գիտնական բժշկապետ Ստեփանոս Շահրիմանյանին։ Հետագա նամակները ցույց են տալիս, որ բացի Ստ. Շահրիմանյանից, նա Թելավում ունեցել է նաև մի այլ ուսուցիչ և որ այստեղ նրա ձեռք բերած բժշկական գիտելիքները ավելի շատ կիրառական բնույթ են կրել։

---

[1] Սույն նամակների ժողովածուն, որը բաղկացած է շուրջ 280 նամակներից, համարվում է Մատենադարանի № 9295 ձեռագիրը, որի մեջ նամակները դասավորված են ժամանակագրական կարգով։

1823 թ. Սիմոնը մեկնում է Մոսկվա՝ մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալու։ Սակայն Մոսկվայում նա միայն հաջորդ տարին է կարողանում հանձնել ընդունելության քննությունները։ 1824 թվականից նա դառնում է Մոսկվայի Պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանող։

Մոսկվայից գրած իր նամակներում Սիմոնը նկարագրում է համալսարանի կյանքը, ներքին խստագույն կարգապահությունը, խոսում է տարեկան չորս անգամ քննություններ հանձնելու սահմանված օրենքի, ինչպես նաև այն մասին, որ համալսարանավարտ բժիշկը, մինչև ինքնուրույն աշխատանքի անցնելը՝ պարտադիր կերպով, առանց դրամական հատուցման, պետք է աշխատի կլինիկական հիվանդանոցում փորձառություն ձեռք բերելու համար։

Սիմոն Լոռու-Մելիքյանի ուսանողական տարիները ծանր են անցել Մոսկվայում։

Բժշկապետ Ստեփանոս Շահրիմանյանի և ուրիշների միջամտությամբ Ներսես Աշտարակեցին (հետագայում կաթողիկոս) խոստանում է դրամական օժանդակություն ցույց տալու Սիմոնին։ Սկզբում մեծ ձգձգումներով նա կատարում է իր խոստումը, սակայն հետագայում բոլորովին հրաժարվում է օգնելուց, որի հետևանքով Սիմոնը հարկադրված է լինում թողնել համալսարանը։

Ինչու է Ներսեսը հրաժարվում իր խոստացած օգնությունից։ Անհիմն կլիներ կարծել, որ նա չի օգնել չկարելով, այսինքն միջոցներ չունենալու պատճառով։

Ենթադրել, թե Ներսեսը դրամական օգնություն ուղարկելուց հրաժարվել է, նկատի ունենալով, որ Սիմոնը չի արդարացրել իրեն, նույնպես չենք կարող, որովհետև նա իր ընդունակություններով նույնիսկ գրավել է Մոսկվայի համալսարանում իր պրոֆեսորների ուշադրությունը և համակրանքը, ինչպես այդ երևում է Սիմոնի 1827 թ. նոյեմբերի 5-ի նամակի հետևյալ տողերից.

«Հարկադրեալ ի դառն վիճակէ կամէի... ելանել յունիվերսիտետէ աստի, բայց արգելաւ ինձ ի հանդիսացեալ պրոֆեսորէ Մուդրովեն՝ յասելն նորա ի մէջ բոլոր պրոֆեսորաց և ընկերացն իմոց զայս ինչ սիրեմ զքեզ, տեսանեմ ի քեզ զբնական ձիրս բժշկութեան և խորհուրդ տամ քեզ մնալ գոնէ մինչև ի լեկրութիւն և այնպէս ելանել»։

19-րդ դարի սկզբներին խոշոր ռուս կլինիցիստ, ներքին պաթոլոգիայի հիմնադիր, մեծ հեղինակություն վայելող Մուդրովի ջերմ խոսքերը Սիմոնի մասին ցույց են տալիս, որ վերջինս ընդունակ, ջանասեր և հուսատու ուսանողի համարում ուներ։

Ուրեմն ինչու էր Ներսես Աշտարակեցին դադարեցնում իր նյութական օժանդակությունը։ Մեզ թվում է, դրանում դեր է կատարել նախ՝ Լազարյանների հետ նրա գժտությունը։ Լազարյանները Սիմոնին տվել էին ապրելու և սովորելու որոշ հարմարություններ, որի դիմաց նա պարտավոր էր շաբաթվա ընթացքում չորս ժամ (լատիներեն) բարձրաձայն ընթերցանության դասեր տալ Լազարյան ճեմարանի տասն աշակերտների, բայց Սիմոն Լոռու-Մելիքյանը հրաժարվում է իրեն տրամադրված այդ հարմա-

քութիւններից և ցանկանում է համալսարանի մոտ սենյակ վարձել և ապրել համալսարանի շրջակայքում։

Սիմոնի ճեմարանից հեռանալը և շարունակ ռուսական միջավայրում գտնվելու ցանկությունը դուր չի գալիս լազարյաններին և իրեն՝ Ներսես Աշտարակեցուն։

Կա մի այլ փաստ էլ. դեռևս համալսարան չավարտած ուսանող Ս. Լոռու-Մելիքյանը խստորեն քննադատության է ենթարկում իր ուսուցիչ բժիշկ Ստեփանոս Շահրիմանյանի «Փղորայ Հայաստանի» մեծածավալ աշխատությունը։ 1829 թվականի նոյեմբերի 23-ին իր հորն ուղարկած նամակում այդ առթիվ ընդհանուր կարգի դիտողություններ անելուց հետո գրում է. «...կան ի «Փղորայիդ Հայաստանի» զմեծամեծ կարգի սղալանքս և անտեղի դատարկախօսութիւնս, պարտ է բազումս յաւելուլ և կարգաւորել, որպէս և բազումս պակասել, մեծ է արդարև մաս մատեանդ և կարի բազմաթերթ, բայց նիւթ իրեն և պիտանութիւն սակաւաչափ յոյժ որպէս խօսի անդ կրիախոտիդ, թէ ունի զօրութիւն, բանալոյ զփակեալ կըպղունս և կամ զմագնիսաւորութեանդ անուան մարգարեական տայ իսկ և իսկ զզօրութիւն, որպէս թէ, զգրեալ և կնքեալ նամակ եդեալ ի վերայ մագնիսաւորլոյն սրտի ընթերցեալ լինի ի նմանէ կէտ առ կէտ առանց սղալանց։ Ասեմ ձեզ թէ այսոքիկ մակամտութիւնք զրոյցք են պառավական, վայելեալ իսկ և իսկ Սիբիլլայից և մանկացեալ ծերոց, քանզի սուտ է գլխովին և դատարկ ունայնախօսութիւն, որպէս ի ձեռն տեսական և գործնական բժշկական աներկբայելի փորձառութեանց պնդագոյն հաստատի...»։

Մեզ թվում է, որ Ներսես Աշտարակեցու՝ Սիմոնին նյութական օգնություն ցույց տալուց հրաժարվելու խնդրում դեր են կատարել վերոհիշյալ հանգամանքները։

1828 թվականին տնտեսական ծանր պայմաններից ստիպված նա դուրս է գալիս համալսարանից և մտնում է քաղաքացիական ծառայության։

Ինչքան է տևում Սիմոնի ուսման ընդմիջումը, նրա նամակներից հնարավոր չի պարզել։ Հայտնի է միայն, որ 1832 թվականին նա մրցանակով ավարտում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը։ Մոսկվայի պետական կլինիկայում շուրջ մի տարի պարտադիր ձրի կերպով աշխատելուց հետո, որի ընթացքում ձեռք է բերում աշխատանքի որոշ փորձ, Սիմոնը մեկնում է Ս. Պետերբուրգ՝ նշանակում ստանալու և իր իսկ խնդրանքով նշանակվում է որպես Հայկական մարզի բժիշկ։

1833 թվականի փետրվարի 25-ին գրած նամակում մենք կարդում ենք.

«Ի 4-ն ամսոյս ի Սանկտ Պետերբուրգ Կայսերական բարձրագոյն հրամանաւ հաստատեցայ ես բժշկապետ քաղաքին Երևանու և բոլոր նահանգի նորին կարգեցաւ ինձ ոռճիկ տարին երկու հարիւր թուման նաև կվարտիր թագաւորին։ Տուաւ երկուս թագաւորական ֆերշել մին մլադշի և միւսն ստարշի. և մին պրիվիլիգիրովանի Պովիվալնի բարկայ, այն է (տատ) ուսեալ, կրթեալ և փորձեալ ի կայսերական Վ.օսպիտալնի տան, սոցայ երիցունս առանձին ոռճիկ և տուն թագաւորական, սոքայ յառաջ քան զիս յուղարկին յԵրևան քաղաքս։

1833 թ. մայիսի 20-ին Երևան է ժամանում Հայկական մարզի բժիշկ՝ Մոսկվայի համալսարանավարտ Սիմոն Լոռու-Մելիքյանը, առաջին դիպլոմավոր բժիշկը Հայաստանում։

Ծանոթանալով «Հայկական մարզի» ժողովրդական սանիտարական առողջապահական բնագավառում աշխատող «կադրերի» հետ, Ս. Լոռու-Մելիքյանը 1833 թվականի հունիսի 3-ին իր հորը գրած նամակում հայտնում է, որ Երևանում այդ ժամանակ եղել են երկու հեքիմ, որոնցից մեկը սպասարկել է Էջմիածնի վանքին։

Պետք է ենթադրել, որ եղել են էլի մի քանի տեղացի ինքնուս բժիշկներ, ոսկրահարթներ, տատմերներ, վարսավիրներ, քահանաներ և այլն, որոնք և սպասարկել են, եթե կարելի է այսպես արտահայտվել, ժողովրդի սանիտարական առողջապահության գործին։

Սիմոնը սկզբնական շրջանում գրած նամակներում խոսում է երկրի հակասանիտարական դրության մասին, ինչպես նաև Երևանի ու առհասարակ ամբողջ Արարատյան հարթավայրի անտանելի ու հիվանդագին կլիմայի մասին։ Ահա այս պայմաններում զանազան տեսակի սուր վարակիչ հիվանդություններ՝ ժանտախտ-խոլերա, ծաղիկ-տիֆեր, ինչպես նաև մեր ժողովրդի համար հազարամյակներ շարունակվող կորստաբեր մալարիան հաճախ առաջացրել են սոսկալի համաճարակներ, որոնց ընթացքում ժողովուրդը տվել է հազարավոր զոհեր։

Հայաստանում՝ սուր վարակիչ հիվանդություններից բռնկվող համաճարակների դեմ պայքարի գործը բժշկագիտական սկզբունքներով կազմակերպելու առաջին փորձը կապված է ռուսների Հայաստան գալու հետ։

Կողբ գյուղում ժանտախտից բռնկված համաճարակի դեմ պայքարելու կապակցությամբ գեներալ Պասկևիչի կողմից Եփրեմ կաթողիկոսին ուղարկած 1829 թվականի փետրվարի 12-ի նամակում հետևյալն ենք կարդում.

«Կողբ գյուղում եղած վարակիչ հիվանդության (ժանտախտ) պատճառով տերությունը գործ դրեց բոլոր հարկավոր միջոցները և քարանտինական զգուշություն, որպեսզի դադարի այդ վնասակար ցավը և չտարածվի ուրիշ տեղերում»։ Ապա խոսելով այն մասին, որ Էջմիածնից եկած մի վարդապետ Գեղարդով ու խաչով է ցանկանում պայքարել համաճարակի դեմ, Պասկևիչը գրում է.

«Նրա ներկայության միջոցին անդադար խռնվում էր ամբողջ գյուղի ժողովուրդը. բոլոր այն գերդաստանները, որոնք արդեն վարակված էին ցավից, խառն պտտվում էին ամբոխում այնպիսիների հետ, որոնց առողջությունը կասկածելի էր և ընդհանուր անկարգություն առաջացավ...

Այդպիսի գործողությամբ խախտված են բարձրագույն իշխանությամբ հաստատված քարանտինական այն կանոնները, որոնց ոչ ոք պիտի զանց առնէ,... վասն որոյ խնդրում եմ Ձեզ, հովվապետ, որպեսզի այսուհետև այդպիսի գործերում և դեպքերում ոչինչ չձեռնարկեք»[1]։

Ահա պատմական իրողությունը. դարեր շարունակ Էջմիածինը և հայ կղերականությունը երկրի ներսում բռնկվող սուր վարակիչ հիվանդությունների համաճարակների «ամիջամտելով», իրենց բացարձակ տգիտությամբ ավելի են խորացրել վարակի տարածումը ժողովրդի մեջ։

[1] Երիցյանց Ա., Կովկասի Հայք 19-րդ դարում, I մաս, 1894, Թիֆլիս։

Պասկևիչը իր նամակը հավանորեն գրած պետք է լինի «Հայկական մարզում» գտնվող զինվորական բժիշկների տված տեղեկությունների և զեկուցագրերի հիման վրա, որոնց անհանգստության գլխավոր առիթը եղել է ռուս զորամասի առողջապահական վիճակի անվտանգությունը։ Ուստի, մինչև քաղաքացիական գծով սանիտարական առողջապահական մարմինների կազմակերպումը, նրանց ֆունկցիան, ըստ երևույթին, մասամբ կատարել են ռուսական բանակի առողջապահական մարմինները։

Սիմոն Լոռու-Մելիքյանը սկսում է իր աշխատանքը ավելի ծանր պայմաններում. կատարելով իր առօրյա ծառայությունը, նա ժամանակ է գտնում տեղում ֆելդշերներ և ծաղիկ պատվաստող բժշկական միջին կարգի աշխատողներ պատրաստել։

1834 թ. հոկտեմբերի 6-ին նա գրում է, որ սպասում է ծաղիկ պատվաստող Պետրոսին. երբ նա Թելավից վերադառնա՝ նրա հետ ինքը լատիներեն և ռուսերեն պարապելով, ֆելդշեր կդարձնի նրան։

«... Եւ սպասեմ դրա գալստեանն, որ զդա ֆերշել կարգեցից, նախ ուսանելով զնա վրոքը ինչ լատիներեն և ռուսերեն»։

Բժիշկ Սիմոն Լոռու-Մելիքյանը այդ ժամանակամիջոցում շարունակում է աշխատել իր վրա։ Ռուսական կուլտուրապես զարգացած կենտրոնից գալով հեռավոր Հայաստան, նա ռուսական գրականության միջոցով շարունակ աշխատել է չկտրվել բժշկության ասպարեզում կատարված նորություններից։ Այդ առթիվ 1837 թվականի փետրվարի 15-ի նամակում կարդում ենք.

«... Եթէ կարասցեք գտանել յայդր ի գրավաճառս զնորագոյն ցուցակ մատենիցն Ռուսաց՝ տպեալ ի Ռուսիա 1836 ամի, կոչեցեալ «Պոլնի կատալոգ բասսիիսկիմ կնիգամ», գնել յղեսցիք շուտով ի ձեռն փոստային առ իս, զի կարի պիտոյ է վասն իմ»։

Այս կապակցությամբ պետք է ասել, որ, ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս, Անդրկովկասի այլ քաղաքներում աշխատելու ամբողջ ժամանակաշրջանում, Սիմոնը իր հոր միջոցով Թիֆլիսից ստացել է ռուսերեն լեզվով իրեն անհրաժեշտ մասնագիտական գրականություն, բժշկական գործիքներ և դեղորայք։ Շատ հազվադյուտ գրքեր, շուկայում չլինելու դեպքում, նա խնդրել է ձեռք բերել և ուղարկել իրեն ծանոթների օգնությամբ։ Այսպես, օրինակ, 1840 թ. հունիսի 1-ին իր հորը գրած նամակում կարդում ենք.

«... Ամենարհարար խնդրեմ կատար ածել և յուղարկել վասն իմ ներքոգրեալսն.

1. Լատիներէն ընդ ռուսերէն լեքսիկոնն մեծ ի պարոն Շահրուդաղովէն...

2. Ֆարմակոպիէն ռոսիքայ՝ Ձեր բարեկամ ֆէրշէլ՝ 14 կլաս Անդրեյ Իվանիչ Ֆոմինին խնդրեալ առ ժամանակ...»։

Նույն նամակով հայտնում է հորը այն մասին, որ լույս է տեսել գիրք՝ նվիրված դեղերի պետական կայուն գների. «1833 թ. յամի տպագրրեալ տաքսոմֆ բոլոր դեղօրէիցն գիննն»։

19-րդ դարի սկզբներին Վենետիկում լույս է տեսնում եվրոպական կրթություն ստացած հայ բժիշկ Միքայել Բեստենի «Բժշկականութիւն»

խորագիրը կրող աշխատությունը։ Այն երկար ժամանակ գտնվում էր հայ մտավորականության ուշադրության կենտրոնում։ Սակայն, Սիմոն Լոռու-Մելիքյանը, լինելով ռուս առաջավոր բժիշկների արժանավոր աշակերտներից մեկը, ծանոթանալով այդ աշխատության հետ, ցուցաբերում է քննադատական վերաբերմունք։ 1827 թվականի ապրիլի 11-ին պատասխանելով իր հոր հարցմանը, դեռևս ուսանող Սիմոնը գրում է.

«Բժշկարանն Բէստէնին տեսեալ եմ և ընթերցեալ, ասեմ զի նա չպիտոյանայ վասն ձեր, նախ զի ոէցէպտներն իտալէրէն է և երկրորդ՝ զի հին է հեղինակութիւն նորա, մանաւանդ զերկրորդ հատոր նորին, որ է ժողով բաղադրեալ դեղոբէից և անուանք անպիտանց»։

Սիմոնի ուսանողության տարիներին արդեն, ռուսական բժշկագիտությունը շատ կողմերով, հատկապես համաճարակագիտության և հիվանդությունների ուսումնասիրման ու դասավանդման մեթոդներով, անհամեմատ բարձր մակարդակի վրա էր կանգնած։

Բավական է այստեղ հիշատակել նշանավոր ռուս գիտնական Դանիլո Սամոիլովիչի (1724—1811 թթ.) անունը, որ առաջին անգամ համաճարակագիտությունը դրեց իսկական գիտական հիմքերի վրա։ Նա առաջինը եղավ, որ մանրամասնորեն նկարագրեց ժանտախտի վարակի բնույթը, տարածման ուղիները, ինչպես նաև նրա դեմ պայքարի գիտական սկզբունքները։ Դանիլո Սամոիլովիչի աշխատությունները թարգմանվեցին մի շարք եվրոպական լեզուներով։ Նա ընտրվեց մոտ տասը եվրոպական ակադեմիաների անդամ։ Այնուհետև քննվող ժամանակաշրջանում ռուս ականավոր անատոմ և վիրաբույժ Իլյա Վասիլևիչ Բույալսկին անատոմիայի և վիրաբուժության մեջ կատարած իր փայլուն աշխատություններով մեծ հետաքրքրություն է առաջ բերում ոչ միայն մեզ մոտ, այլև Եվրոպայում և Ամերիկայում։ Նրա տոպոգրաֆիկ անատոմիա-վիրաբուժական հայտնի ատլասը, որը լույս է տեսնում 1828 թվականին, մի տարի անց թարգմանվում է գերմաներեն։ Բույալսկին գրում և հրատարակում է շուրջ հարյուր բժշկագիտական աշխատություններ, բոլորն էլ ռուսերեն լեզվով։ Նրա հիացմունք առաջացնող, երկար ժամանակ չգերազանցված վիրաբուժական բարձր արվեստի մասին են վկայում պրոֆեսոր Սոլոմոնի հետևյալ խոսքերը. «Եթե ես ստիպված լինեմ անիվրիզմայի առիթով ենթարկվելու օպերացիայի, այն ժամանակ ամբողջ աշխարհում ես միայն երկու մարդու կվստահեի՝ Կուպիրին և Բույալսկուն»[1]։

19-րդ դարի առաջին կեսին հանդես է գալիս աշխարհահռչակ ռուս վիրաբույժ Նիկոլայ Իվանովիչ Պիրագովը, որն իր օրիգինալ օպերացիաներով, վիրաբուժության և տոպոգրաֆիկ անատոմիայի բնագավառում հեղաշրջում առաջ բերող հետազոտություններով զարգացրեց և առաջ մղեց ռուս և համաշխարհային բժշկագիտությունը։

1835 թ. օգոստոսի 6-ին Սիմոնը Երևանից մեկնում է Օրդուբադ, այնտեղ բռնկվող ինչ որ սուր վարակիչ հիվանդության համաճարակի դեմ պայքար կազմակերպելու համար։ Նա կազմակերպում և ղեկավարում է կարանտինը, որը տևում է մինչև 1837 թվականի հունվարի մեկը։ Ցավոք,

[1] Л. Я. Скороходов, Краткий очерк истории русской медицины, Ленинград, 1926, стр. 111.

իր գրած նամակներում նա մանրամասն չի նկարագրում համաճարակի բնույթը, նրա պատճառած ավերումները, բացի սահմանված կարանտինից՝ իր գործադրած պայքարի այլ միջոցները։ Համաճարակի վերջում նրա գրած մի քանի նամակները ցույց են տալիս, որ մեկ տարի չորս ամիս տևող համաճարակի աշխատանքները կազմակերպելու գիմաց բժիշկ Լոռու-Մելիքյանը պետական օրենքներով իրեն հասանելիք գումարը չի կարողանում ստանալ։

Որևն հասանելիք աշխատավարձը ստանալու համար նա գրում է գիմումներ ու բողոքներ, բայց ապարդյուն։ Պահպանված նամակներից չի պարզվում, թե հաջողվում է արդյոք նրան ի վերջո ստանալ իր գրամը։

Սիմոն Լոռու-Մելիքյանի հետագա նամակներից (վերջին նամակը գրված է 1848 թվականին), պարզվում է, որ նա ապրում է առողջական, տնտեսական և հոգեկան ծանր վիճակ։ Բազմաթիվ անգամներ գիմում է ներկայացնում իրեն այլ վայր տեղափոխելու մասին. ի վերջո նրան նշանակում են աշխատանքի հին Շամախում, Ելիզավետպոլում (այժմյան Կիրովաբադում) և Անդրկովկասի այլ վայրերում, բայց ոչ Թիֆլիսում, ուր նա ցանկանում էր բուժվել, վերականգնել իր առողջությունը և աշխատել ստացիոնար պայմաններում։

Սիմոն Լոռու-Մելիքյանի կողմից հորն ուղարկված նամակները ուշագրավ են նաև այլ տեսակետից։ Սիմոնը իր նամակներում տարբեր առիթներով հիշատակում է 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին գործող մի քանի հայ դիպլոմավոր բժիշկների անունները, որոնք եղել են Մոսկվայի համալսարանի սաներ։ Սրանց վերաբերյալ տեղեկությունները կազմում են հայ բժշկության քննարկվող ժամանակաշրջանի պատմության ամենաուշագրավ էջերը։ Նրանք ցույց են տալիս այն վիթխարի գերը, որ կատարել է ռուսական բժշկական գիտությունը հայ բժշկական կադրերի պատրաստման ուղղությամբ։

Այսպես, օրինակ, 1824 թվականի մայիսի 23-ին իր հորը գրած նամակում Սիմոնը տեղեկություններ է հաղորդում բժիշկ Սողոմոն Տեր-Ղուկասյանի մասին։ Նա գրում է.

«Հարգոյապատիւ Սողոմոն Տէր-Ղուկասեանն, սիրէ զիս յոյժ և շնորհունի ի վերայ իմ. սա վասն արժանաւորութեան իւրոյ ընկալաւ զաստիճան գոկտորութեան, ի 15-ին ապրիլի 1824 ամի։ Արդարև ուրախ եմ ընդ բաղդաւորութիւն նորին, քան զի ցանկալի է մեզ ունիլ յազգի մերում զանձինս երևելիս գեղապատշաճ գիտութեամբք։

Կարելի է ենթադրել, որ Ս. Տեր-Ղուկասյանը առաջին հայ բժիշկն է, կամ թե առաջիններից մեկը, որ Մոսկվայում ստացել է բժշկական գիտությունների դոկտորի աստիճան։ Այնուհետև Սիմոնը՝ իր գրած բազմաթիվ նամակներում, իր ուսուցիչ բժ. Ստեփանոս Շահրիմանյանի մասին խոսելիս, միաժամանակ հիշատակում է մինչև այժմ անհայտ բժշկապետ Հովհաննես Շահրիմանյանի մասին։ Այս առթիվ 1825 թ. սեպտեմբերի 20-ին նա գրում է.

«Նորին յարգոյապատիւ Ազնուականութեան, պատուելի բժշկապետ պարոն Հովհաննես Շահրիմանեանին, ողջոյն յարգանաց նուիրեմ նաև ազնուական կնոջ նորին։ Ըստ այսմ թղթոյ գրեմ նաև առ վարժապետն իմ. և առ նորին բարձր սրբազնութիւնս։

Կասկածից դուրս է, որ Հովհաննես և Ստեփանոս Շահրիմանյանները տարբեր անձնավորություններ են։ Հիմք կա ենթադրելու, որ նրանք երկուսն էլ պատկանում են Ջուղայեցի հարուստ վաճառական Շահրիմանյանների ընտանիքին։ Բժ. Ս. Շահրիմանյանը, շնորհիվ իր գրած մեծածավալ, շատ արժեքավոր «Տնկարանութիւն կամ փղորայ Հայաստանի» գրքի, ինչպես և ժանտախտի մասին գրած աշխատությունների, մեր գրականության մեջ հայտնի դեմք է։ Ի միջի այլոց, Սիմոնի հաղորդած տվյալներից պարզվում է, որ բժշկապետ Ս. Շահրիմանյանը մահացել է խոլերայից 1830 թվականին՝ Թիֆլիսում բռնկվող խոլերայի համաճարակի դեմ պայքար կազմակերպելու օրերին։ Իսկ բժշկապետ Հովհաննես Շահրիմանյանը, Սիմոն Լոռու-Մելիքյանի տված տեղեկությունների համաձայն, 19-րդ դարի առաջին քառորդում նույնպես աշխատել է Վրաստանում, գլխավորապես Թբիլիսիում։ Նրա մասին Սիմոնը խոսում է մեծ հարգանքով, և կարելի է ենթադրել, որ բժշկապետ Հովհաննես Շահրիմանյանը եղել է փորձառու բժիշկ։

1828 թ. օգոստոսի 11-ին Մոսկվայից գրած նամակում Սիմոնը խոսում է իր մտերիմ ընկերներից մեկի՝ բժիշկ Գրիգոր Դևրիշյանի մասին, որը, ինչպես երևում է նամակներից, մի քանի տարի ավելի շուտ է ավարտել Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը։ Հետագայում գրած իր նամակներից մեկում Սիմոնը հայտնում է, որ կուսակալի հրամանով իրեն տեղափոխում են նոր աշխատանքի՝ «բժիշկ ի վերայ բոլոր նահանգին երկրին Ղուբայու, որպէս և դաւրիշինն, ու կարգեցին ի Նուխիս։ Շատ հավանական է, որ «դաւրիշը» նույն բժիշկ Գրիգոր Դևրիշյանն է։ Իր բազմաթիվ նամակներում զանազան առիթներով նա հիշատակում է նաև մի քանի այլ բժիշկների անուններ։ Դրանք են՝ բժ. Պետրոս Քալանթարյանը, բժ. Ալեքսանդր Ստամբոլցյանը, բժիշկներ Մովսեսը, Հարությունը և ուրիշներ։

Ուշադրության արժանի դեմք է բժշկական գիտությունների դոկտոր Սողոմոն Արտեմիչ Տեր-Ղուկասյանը, որը 1825 թվականին Մոսկվայից վերադառնում է Կովկաս։ Սկզբում նա աշխատում է Գորիում, Թելավում, իսկ վերջում, ինչպես երևում է Սիմոնի հաղորդած տեղեկություններից, տեղափոխվում է Թիֆլիս և պաշտոնավարում է «վրացերնի ուպրավում»։ Ս. Ա. Տեր-Ղուկասյանը մահանում է Թիֆլիսում 1840 թվականին։

Այնուհետև Սիմոնը հիշում է բժ. Առաքելին, որը հայերեն լեզվով գրել է վիրաբուժության մասին գիրք։ 1843 թվականին Շամախիում իր պրակտիկ գործունեության ընթացքում Սիմոնը զգում է այդ գրքի պահանջը, որի համար էլ գրում և խնդրում է իր հորը, որպեսզի վերջինս Թբիլիսիում գտնի և ուղարկի իրեն՝ Շամախի։

Դժբախտաբար մեր տրամադրության տակ լրացուցիչ նյութեր չունենք նաև Մոսկվայի համալսարանավարտ, Նուխու նահանգական բժիշկ Գրիգոր Դևրիշյանի, բժիշկ Ալեքսանդր Ստամբոլցյանի և ուրիշների մասին։

Ինչպես հայտնի է, 1839 թվականին Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետն ավարտում է նաև Գևորգ Հախվերդյանը, որը վերադառնալով Թիֆլիս՝ նշանակվում է զինվորական բժիշկ։ Այստեղ կարճ ժամանակամիջոցում Հախվերդյանը հռչակվում է որպես լավագույն բժիշկ։

Բժիշկ Գ. Հախվերդյանը Թիֆլիսում միաժամանակ ձեռնամուխ է լի-

նում հասարակական-գրական շատ շնորհակալ աշխատանքի։ Նա կապ է հաստատում բնակչության լայն խավերի, հատկապես արհեստավորների հետ և ամենայն խնամքով հավաքում, գրի է առնում հայ գուսանական-աշուղական երգերը։ Շնորհիվ բժ. Ռ. Հախվերդյանի անդուլ աշխատանքի, մենք այսօր ունենք 18-րդ դարի հայ հռչակավոր բանաստեղծ գուսան Սայաթ-Նովայի անմահ ստեղծագործությունները։

Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի մյուս հայ սանը բժիշկ Դավիթ Հարությունի Ռոստոմյանն է, որը 1840 թվականին ավարտելով համալսարանը, գալիս է Կովկաս և նշանակվում է Բաքվի նահանգական բժիշկ։

Թիֆլիսում հրատարակվող «Կռունկ» ամսագրում բժիշկ Ռոստոմյանը 1861—1862 թթ. ընթացքում «Հասարակական բժշկություն» հատուկ բաժնում լույս է ընծայում մի շարք գիտա-պոպուլյար հոդվածներ։ Նա կատարում է Բաքվի ամբողջ նահանգի բժշկա-սանիտարական-տոպոգրաֆիկ նկարագրությունը և այլ կուլտուր-կրթական աշխատանքներ[1]։

1842 թ. նոյեմբերի 22-ին Պետերբուրգից Խաչատուր Աբովյանին գրած իր նամակում նկարիչ Ստեփան Ներսիսյանը կողմնակի կերպով ակնարկում է մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Պետերբուրգում ապրող հայ բժիշկ լեյբ-մեդիկ Մարկոսովի (Մարկոսյանի) մասին։

«Ստացեալ եմ պակեթ մի ի Տէր Մովսիսէ Տէր-Մովսիսեան, որ եկն ի Պետերբուրգ, առ լեյբ մեդիկ Մարկոսովն, չգիտելով իմ թէ յումկէ իցէ պակիթն տարի առ նա»[2]։

Դժբախտաբար մենք դեռ չունենք մեր տրամադրության տակ լեյբ-մեդիկ Մարկոսովի, նրա կյանքի, հասարակական-գիտական գործունեության վերաբերյալ ուրիշ տվյալներ, բացի վերը նշած ակնարկից։ Սակայն պետք է ենթադրել, որ նա լեյբ-մեդիկի պաշտոնին է հասել, շնորհիվ վաղուց արդեն բժշկագիտության նշանավոր կենտրոն ճանաչված Պետերբուրգում իր երկար տարիների համառ աշխատանքի։

Հայ բժշկականության պատմության մեջ հետաքրքրական դեմք է նաև ջուղայեցի բժիշկ Պետրոս Դալանթարյանը, որը համաձայն բժ. Ս. Լոռու-Մելիքյանի վկայության, իր՝ Մոսկվայում սովորելու տարիներին աշխատել է Լազարյան ճեմարանում, հավանաբար ճեմարանին կից հիվանդանոցում։ Դեռ 1789 թվականին նա գրում է «Բժշկարան համառօտ» մի աշխատություն և հրատարակում է այն 1793 թվականին Նոր-Նախիջևանում։ Բժիշկ Պ. Քալանթարյանը իր աշխատությունը շարադրելիս հանդես է գալիս որպես փորձառու, իր մասնագիտության վերաբերվող հրապարակի վրա գոյություն ունեցող գրականության հետ լավատեղյակ, գարգացած բժիշկ։

Դալանթարյանը, օրինակ, գրում է.

«Խելիդոնիում մայիօր. է արմատն մամիրանին մեծի զոր ի դեղս՝ աչաց ցաւոյն գործածեմք։ Զորմէ եւրոպայեցիքն ի բժշկական գիրս գրեն թէ՝ աչաց ցաւոյն դեղ է, բայց ինքեանք սակաւ կիր առնուն. և գրեն թէ՝ հին հեղինակքըն զփորձն սորա ուսեալ են՝ 'ի ծիծռանց, որք 'ի ծաղկանց

---

[1] Ավելի մանրամասն տես Լ. Ա. Հովհաննիսյանի «Բժշկության պատմությունը Հայաստանում», 4-րդ հատորի 62—66 էջերը։

[2] Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի Խ. Աբովյան «Գրական-բանասիրական հետազոտություններ», գիրք երրորդ, Երևան, 1948, էջ 282։

սորիս առեալ քսեն յաչս իւրեանց և լուսաւորին, ուստի և մարդիկք և ի յարմատոյ սորին՝ առնեն դեղ աչաց...»[1]։

Պ. Քալանթարյանը մեր բժիշկների ուշադրությունը հրավիրելով հայրենի ֆլորայի հարուստ դեղարույսերի օգտագործման անհրաժեշտության վրա, ընդգծում է, որ եվրոպացի բժիշկները մեր երկրում աճող, փորձով ճշտված դեղարույսերը չեն օգտագործում, որովհետև նրանք անծանոթ են մեր երկրի դեղարույսերի հատկություններին։ Պ. Քալանթարյանը միաժամանակ մեր բժշկներին զգուշացնում է, որ եվրոպացի հեղինակների գրած բժշկական գրքերում երբեմն այս կամ այն հիվանդության դեմ առաջարկվում է այնպիսի դեղամիջոց, որի օգտագործումը փորձով ստուգված չէ, այլ հիմնված է ավանդության վրա։ Դեղանյութերի գործածման մի շարք դեպքերում նա հանդես է բերում լրիվ և համարձակ ինքնուրույնություն, ներդնում է իր բժշկական բազմամյա փորձի արդյունքները։

Բժիշկ Պ. Քալանթարյանը իր գրքի վերջում կազմել է համառոտ բժշկական բառարան, որտեղ լատիներեն և հայերեն տերմինների հետ շատ դեպքերում գործ է ածում նաև բառեր ռուսերեն, պարսկերեն, հունարեն և այլն։ Բայց պետք է ասել, որ բժ. Պ. Քալանթարյանի Մոսկվայի համալսարանում սովորելու և ավարտելու մասին դեռևս ոչ մի ուղղակի վկայություն չունենք։

Պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը իր «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության 3-րդ հատորում բավական լայն տեղ է հատկացնում Պ. Քալանթարյանին, որտեղ նա չի ժխտում Քալանթարյանի՝ Մոսկվայում կամ մի այլ ռուսական կուլտուրայի կենտրոնում սովորելու և ավարտելու հավանականությունը։ Նշած մի շարք փաստերը, իսկ առավելապես նրա երեսունից ավելի տարիներ Մոսկվայում ապրելու և աշխատելու հանգամանքը, մեզ իրավունք են տալիս եզրակացնելու, որ իրավամբ Պ. Քալանթարյանը ռուսական բժշկությանը մոտիկ կանգնած մարդ էր։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարանի) № 9138 ձեռագրի հետ թեթևակի ծանոթությունը ցույց է տալիս, որ 19-րդ դարի առաջին կեսում Թիֆլիսում ապրել է անվանի բժիշկ Գաբրիել Մկրտումյանց-Մունթոյանցը։ Նա եղել է Ներսիսյան դպրոցի առաջին շրջանավարտներից, գրել է բանաստեղծություններ և եղել է Խաչատուր Աբովյանի մոտ ընկերներից։ Մաքառելով 1847 թվականին Թիֆլիսում բռնկված խոլերայի համաճարակի դեմ, այդ հիվանդությունից էլ նույն տարին մահացել է։

Նրա, որպես գիտնական բժշկի, հիշատակին նվիրված ընդարձակ տապանագիր բանաստեղծության մեջ կարդում ենք.

«Մեծ բժշկին Գաբրիելի Մկրտումյան-Մունթոյանցի.
Զոր խոլերայ ախտ ամէհի գերեալ ինքեան ճարակ տանի,
Ի մեծ Տփխիս Վրաստանի յերբորդում աւուր յուլիսի,
Ամի հազար ութհարիւր քառասուն և եօթն երորդի...
Ի չար ժանեաց խոլերայի խոցեալս յոլով փրկէի...»[2]։

Այնուհետև բանաստեղծության մեջ ասված է, որ նա հինգ տարեկան

1 Պ. Քալանթարյան, Բժշկարան համառոտ, Նոր-Նախիջևան, 1793, էջ 107։
2 Մատենադարան, ձեռագիր № 9138, էջ 141։

հասակում զրկվում է հորից. նա բազմաթիվ մարդկանց կյանք է ազատում համաճարակի ճիրաններից, բայց դժբախտաբար նրա կյանքի և բժշկական գործունեության մասին ուրիշ հետաքրքրական տվյալներ դեռ չունենք Անհայտ է մնում նաև բժ. Գաբրիել Ս կրտումյան-Մունթոյանցի երբ և որտեղ բժշկական բարձրագույն կրթություն ստանալու հանգամանքը։

Քանի որ նա սովորել է Ներսիսյան դպրոցում, որտեղ ավելի ուժեղ է եղել ռուսական ազդեցությունը, ինչպես նաև այն, որ Գաբրիելը շատ մոտ ընկեր է եղել Խ. Աբովյանի և ուրիշների հետ, որոնք բարձրագույն կրթություն են ստացել ռուսական կուլտուրայի կենտրոններում, ուստի մենք կարող ենք անել այն հավանական ենթադրությունը, որ Գաբրիել Մկրտումյան-Մունթոյանը, պետք է որ նույնպես ռուսական բժշկական բարձրագույն դպրոց ավարտած լինի։

Այս բոլորից կարելի է անել հետևյալ հիմնական եզրակացությունները.։

1. Մինչև Հայաստանի արևելյան մասի Ռուսաստանին միանալը, Հայաստանում չի եղել բժշկական բարձրագույն կրթություն ստացած և ոչ մի բժիշկ, չի եղել ոչ մի առողջապահական հիմնարկ, հիվանդանոց, բուժարան և դեղատուն։

2. Մինչև այդ, իրանա-թյուրքական ծանր լծի տակ հեծող Հայաստանում բժշկությամբ զբաղվել են՝ տեղացի մի քանի ինքնուս բժիշկներ, ոսկրահարթներ, վարսավիրներ, տատամներներ, քահանաներ և այլն։

3. 19-րդ դարի առաջին կեսում Հայաստան եկող առաջին դիպլոմավոր բժիշկները իրենց կրթությունն ստացել էին Ռուսաստանում, գլխավորապես Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում։

4. 19-րդ դարի առաջին կեսում հայ բժիշկները, որոնք ավարտում էին ռուսական համալսարանները, իրենց հետ բերում էին ռուսական բժշկագիտության պրոգրեսիվ միջավայրի ազդեցությունը։